



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՆՈՅԵՄԲԵՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՍՈՍ 67

ԳՈՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Աստուած, ողորմէ մեզի եւ օրհնէ մեզ,
բարեհան եղիր մեզի հանդէպ.
որպէսզի աշխարհը գիտնայ քու կամքդ,
բոլոր ազգերը մանչնան թէ դուն ես փրկիչը:
Ժողովուրդները թող գոհութիւն յայտնեն քեզի, ով Աստուած:
Ազգերը թող ուրախանան ու ցնծան,
որովհետեւ դուն արդարութեամբ կը դատես ժողովուրդները,
եւ աշխարհի բոլոր ազգերը դուն ինքդ կ'առաջնորդես:
Երկիրը իր բերքը տուաւ,
Աստուած՝ մեր Աստուածը իր օրհնութիւնը մեզի տուաւ:
Աստուած թող օրհնէ մեզ,
եւ ամբողջ աշխարհը թող երկիւղով պատուէ գայն:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէլոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի քանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ԻՍԱՀԱԿ ԿՕՐՀՆԷ ՅԱԿՈՒՐ (27:1-29)

Հերաբրքրական հապուած մըն է, որ եթէ երբեք պարզապէս փորձենք կարդալ մեր մարդկային փրամաբանութեամբը դժուար թէ ընդունինք, ըմբռնենք ու հասկնանք այս հապուածի իմաստը ու խորհուրդը: Բայց այս բոլորը ցոյց կու տան Աստուծոյ գործելակերպը, որ բոլորովին փարբեր է քան մարդկայինը: Ի վերջոյ ինչ որ Աստուծոյ նախախնամութիւնն է, այդ նախախնամութեան համաձայն փեղի կ'ունենայ ամէն ինչ, եւ ըստ այնմ Յակոբ ինք կը սպանայ այդ օրհնութիւնը: Որքան ալ ան-ընդունելի ըլլայ մեր կողմէ, սակայն Աստուած գիտէ թէ ինչու այս ձեռով պէտք է կատարուի ամէն ինչ:

«Իսահակ ծերացաւ եւ իր աչքերուն փետողութիւնը փկարացաւ»: Մարդկային կեանքը ունի երկու փարբերակ փետողութեան, ֆիզիքական եւ հոգեւոր: Այս պարագային Իսահակի ֆիզիքական փետողութիւնը փկարացած էր, բայց ոչ հոգեւորը փետողութիւնը: Իսահակ թելադրութիւն մը կու տայ Եսաիին, որպէսզի նախքան մեռնիլը օրհնէ զինք, այն վերջին օրհնութիւնը, որ պարզ օրհնութիւն մը չէ, այլ անդրանկութեան: Նահապետական այս օրհնութիւնը նաեւ ժառանգութեան իրաւունքին կապուած օրհնութիւն մըն է: Այդ օրհնութիւնը փակաւին մէկ անգամէն աւելի չի կրկնուիր եւ փեսակ մը փոխան-ցուող իշխանութիւն մըն է: Այս եղելութիւնը Իսահակ ինք հասկցաւ, մանաւանդ երբ այս բոլորը փեսաւ ոչ թէ իր ֆիզիքական աչքերով, այլ՝ հոգեւորը, որուն համար ալ երբեք չքարկացաւ, երբ իմացաւ, որ Յակոբ ինք սրացեր էր օրհնութիւնը, եւ ոչ թէ Եսաւը:

Յակոբին փրուած օրհնութեան մէջ հիմնական չորս կէտեր կան.

1. Կը վերաբերի նիւթական հարստութեան: Աստուծոյ շնորհած բոլոր բարիքները:
2. Կը վերաբերի Յակոբի իր թշնամիներուն վրայ փիրութեան:
3. Կը վերաբերի նաեւ ոչ միայն Յակոբին այլ ամբողջ գերդաստանին:
4. Կը վերաբերի Աստուծոյ օրհնութեան, որ կը նշանակէ Յակոբ մնայուն Աստուծոյ հովանին ունին եւ պաշտպանութիւնը:

Այս դրուագին մէջ մեծ դերակատարութիւն կ'ունենայ Ռեբեկա ինք:

«Խօսքս մտիկ ըրէ»: «Հօսքը գնա ու անկէ ինձի երկու աղէկ ուլ բեր այժերէն»: Հերաբրքրական արքայայտութիւն մըն է, որ առաջին հերթին Ռեբեկա կը վստահեցնէ, որ եթէ երբեք խօսքը մտիկ ընէ, իրեն համար աղէկ պիտի ըլլայ: Իսկ ամենահերաբրքրական բաժինը երկու ուլ այժերէն: Աստուածա-շունչին մէջ ընդհանրապէս ծանօթ ենք որ այժերը խորհրդանիշ են մեղաւորութեան: Ահա այս բոլորը կը նախապարտաստեն գալիքը այն ճշմարտութիւնը, որ հակառակ մեր մեղաւորութեան Քրիստոս ինք պիտի գար մեղաւորը փնտրելու, գրնելու եւ վերադարձնելու: Եկեղեցւոյ հայրերը այս դրուագին մէջ Ռեբեկան պարկերացուցած են որպէս Եկեղեցին, որուն խօսքը մտիկ պէտք է ընել, որպէսզի կարենանք ձեռք ձգել աստուածային օրհնութիւնը: Տակաւին, Ռեբեկան ոչ միայն կը քաջալերէ, այլ՝ նոյնիսկ պարտաստ է իր վրայ առնելու այն անէծքը որ եթէ պիտի գայ Յակոբի վրայ: Եւ խորքին մէջ այդ անէծքը մեղքի անէծքն էր որ այս անգամ Քրիստոս Ինք իր վրայ առաւ, եւ անով մեզ ազատեց այդ անէծքէն:

Բայց թելադրութեան դիմաց, սակայն, Յակոբը կ'ունենայ հետեւեալ արքայայտութիւնը. «Բայց իմ եղբայրս Եսաւը մագոյ մարդ է ու ես լերկ մարդ»: Այո, Յակոբի մորթը սահուն էր, իսկ Եսաւինը՝ մագոյ: Այս պարագային ալ մագոյ արքայայտութիւնը մեղաւորութեան հետ կապուած, որուն դիմաց Յակոբ իր վրայ պիտի առնէր, այլ Քրիստոս մեզի պիտի նմանէր, եւ մեր մեղաւորութիւնը իր վրայ պիտի առնէր:

ԵՍԱԻ ԻՍԱՀԱԿԷՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴՐԷ (27:30-45)

Ահա այս հապուածը կու գայ մեզի ներկայացնելու, որ եթէ երբեք հաւաքարիմ ըլլար իրեն փրուած կոչումին, որ անդրանկութեան կոչումն էր, ապա նաեւ կրնար ունենալ այդ անդրանկութեան հետ կապուած օրհնութիւնը: